Վերապատրաստման դասընթացներն անցան երեք փուլով, որի ընթացքում օգտագործվեցին դասավանդման ժամանակակից մեթոդներ, որոնք վերապատրաստման հետագա փուլերի ընթացքում կիրառվեցին դասապրոցեսի ժամանակ, դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները սովորեցին կազմել դասապլաններ ավելի արդյունավետ եղանակով: Վերապատրաստումները մեծ արձագանք ունեցան արդեն երրորդ փուլի ընթացքում, երբ ինտերակտիվ, ժամանակակից մեթոդները կիրառվեցին լսարանում: Ուսանողներն ավելի ակտիվ էին դասապրոցեսի ընթացքում, անդադար շարունակվում էին քննարկումները, որոնց մասնակցում էին նույնիսկ պակաս գիտելիք ունեցող ուսանողները: Այդպիսի ինտերակտիվ մեթոդներով աշխատելիս ուսանողների մոտ պակասում էր խտրականության զգացումը: «Մասնագիտական մանկավարժություն» առարկայի գծով վերապատրաստման ծրագրերը նպատակաուղղված են համապատասխան մասնագետների կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայմանն ու որակավորման բարձրացմանը: Մասնագիտական բարձր պատրաստվածությունն այսօր հաճախ ենթադրում է համակարգչային նոր տեխնոլոգիաների կիրառում տվյալ մասնագիտության մեջ, օտար լեզուների իմացություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, ինչպես նաև նոր մտածողություն, որոնք միջազգային հանրությանը ինտեգրվելու հիմնական նախապայմաններն են:

«Մասնագիտական մանկավարժություն» առարկայի գծով վերապատրաստման դասընթացները հնարավորություն տվեցին դասախոսներին և արտադրական ուսուցման վարպետներին կարճ ժամանակահատվածում ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Միայն այդպես մենք կարող ենք հաղթահարել համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող այնպիսի փոփոխությունները, ինչպիսիք են շուկաների գլոբալացումը, տեխնոլոգիական զարգացման հզոր տեմպերը, համաշխարհային մրցակցությունը:

Ծրագիրը ֆինանսավորվել էր ԿԱԻ և ՀՀ ԿԳՆ 08.08.2008թ. N 09060139-1 նվիրաբերության պայմանագրի հավելված 1-ի:

Վերապատրաստումներն իրականացրել են

1. Պետրոսյան Մարիամ – Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի մասնագետ
2. Բաբախանյան Տիգրան- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի մասնագետ մասնագետ, Գ. Այնթափի թիվ 2 միջնակարգ դպրոց,
3. Կիրակոսյան Գագիկ- Երևանի պետական հումանիտար քոլեջ
4. Կիրակոսյան Լարիսա-Երևանի Ա.Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջ
5. Բալայան Աստղիկ- ՀՊՄՀ դասախոս, ԿԱԻ մասնագետ
6. Գևորգյան Արմինե-Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն
7. Դավթյան Կարինե- Երևանի Ա.Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջ
8. Իսրաելյան Ռոբերտ - Եղնեգաձորի «Գիտելիք» համլսարանի ուսումնական գծով փոխտնօրեն
9. Քալանթարյան Անահիտ-«Հույսի կամուրջ» ՀԿ
10. Խաչատրյան Հեղինե-Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դոցենտ

11. Համբարձումյան Ամալյա- «Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ
12. Հարությունյան Կարինե- ԿԱԻ մասնագետ
13. Միլիտոսյան Լուիզա- ԵՊԼՀ, Երևանի պետական հումանիտար քոլեջ
14. Մկրտչյան Հայկ - Գ. Արարատ թիվ 2 միջնակարգ դպրոց
15. Անդրեասյան Նաիրա - Գ. Արարատ թիվ 2 միջնակարգ դպրոց
16. Ավանեսյան Վարուժան- Առողջության առաջնային բարեփոխումների պահպանման ծրագիր
17. Նահապետյան Ռոման- Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության Հայ-հունական պետական քոլեջ
18. Պետրոսյան Տիգրան -Գ. Այնթափի թիվ 2 միջնակարգ դպրոց
19. Պետրոսյան Հայկ- Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն գործակալություն
20. Սարգսյան Արևիկ-«ՄԿ և ՈՒՈԿԸ» ՀԿ, «Առլիան» ՍՊԸ
21. Սարգսյան Մերի-«Արլիան» խորհրդատվական և թրեյնինգային կազմակերպության փորձագետ

Վերապատրաստումներին մասնակցել են դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ հետևյալ ուսումնական հաստատություններից՝

1. Երևանի Ն. Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջ
2. Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ
3. Եղեգնաձորի պետական քոլեջ
4. Արտաշատի պետական քոլեջ
5. Իջևանի պետական քոլեջ
6. Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ
7. Արմավիրի գյուղատնտեսական քոլեջ
8. Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջ
9. Հրազդանի պետական քոլեջ
10. Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ
11. Մարտունու պետական քոլեջ
12. Թալինի արհեստագործական ուսումնարան
13. Երևանի Երևանի թիվ 1,3,4,5,6,7,8,9,10 արհեստագործական ուսումնարաններ
14. Մարտունու արհեստագործական ուսումնարան
15. Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության Հայ-հունական պետական քոլեջ
16. «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ
17. «Եվրոպական քոլեջ» հիմնադրամ, Իջևանի բաժանմունք

«Մասնագիտական մանկավարժություն» առարկայի գծով վերապատրաստված դասախոսներին այլևս չի սպառնում դուրս մնալ ուսումնական հաստատությունից մանկավարժական կրթություն չունենալու պատճառով: